Հաստատված է
ԳՊՀ գիտական խորհրդի
2020թ. փետրվարի 29-ի թիվ 2 նիստում
Ռեկտոր՝ Ռ. Հակոբյան
«29» 02. 2020թ.

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

I. Ընդհանուր դրույթներ.

1. Ակադեմիական քաղաքականության բաժինը (այսուհետ՝ ԱՔԲ) Գավառի պետական համալսարանի (այսուհետ՝ ԳՊՀ) կառուցվածքային ստորաբաժանումն է, որը գործում է ԳՊՀ կանոնադրության և սույն կանոնակարգի հիման վրա:
2. ԱՔԲ-ն կարող է վերակազմակերպվել կամ լուծարվել ԳՊՀ հոգաբարձուների խորհրդի որոշմամբ՝ ԳՊՀ ռեկտորի հրամանով:
3. Սույն կանոնակարգը կարող է լրացվել կամ փոփոխվել ԳՊՀ գիտական խորհրդի որոշմամբ:

II. ԳՊՀ ԱՔԲ խնդիրներն ու գործառույթները

4. ԱՔԲ-ի խնդիրներն են.

1) բակալավրիատում, մագիստրատուրայում և ասպիրանտուրայում ուսումնական և գիտահետազոտական գործընթացների պլանավորում, կազմակերպում և վերահսկում,

2) ուսումնական գործընթացին մասնակցող ԳՊՀ կառուցվածքային ստորաբաժանումների աշխատանքների համակարգում,

3) ուսումնական գործընթացի և դրա իրականացման որակի ապահովում

4) գիտահետազոտական գործընթացի և դրա իրականացման որակի ապահովում:

5. ԱՔԲ-ն իրականացնում է հետևյալ գործառույթները.

1) բակալավրիատի, մագիստրատուրայի և ասպիրանտուրայի ուսումնական պլանների ու առարկայական ծրագրերի մշակման գործընթացի կազմակերպում և կատարման վերահսկում,

2) ամբիոնային ծանրաբեռնվածությունների ստուգում և կատարման վերահսկում,

3) սկսնակ դասախոսների՝ ուսումնական գործընթացին ինտեգրման աշխատանքների կազմակերպում

4) բակալավրիատի, մագիստրատուրայի և ասպիրանտուրայի ուսումնական պլանով նախատեսված դասընթացների կատարման ընթացքի, դրանց համապատասխան կրթական միջավայրի ապահովման վերահսկում,

5) ուսումնական գործընթացի բոլոր փուլերի վերահսկում,

6) ընթացիկ, միջանկյալ և հանրագումարային քննությունների անցկացման վերահսկում,

7) ֆակուլտետային ուսումնամեթոդական խորհուրդների աշխատանքների համակարգում,

8) ամփոփիչ ատեստավորման գործընթացի կազմակերպում, ուսանողների ավարտական փաստաթղթերի նախապատրաստում և հաշվառում

9) ուսումնական գործընթացի փաստաթղթային գործավարության ապահովում և վերահսկում,

10) ուսումնական, մանկավարժական, արտադրական, նախաավարտական, գիտահետազոտական, գիտամանկավարժական պրակտիկաների վերահսկում,

11) մասնագիտական կրթական ծրագրերի բարելավման վերաբերյալ առաջարկությունների մշակում և ներկայացում,

12) մագիստրատուրայի ընդունելության կազմակերպում,

13) երկրորդ մասնագիտության գծով ընդունելության կազմակերպում,

14) շարունակական կրթության գծով ընդունելության կազմակերպում,

15) առցանց ուսումնական գործընթացի կազմակերպում,

16) ուսանողների ընդունելության, հեռացման, ուսանողական իրավունքների վերականգման, տեղափոխության, տարկետման, ակադեմիական շարժունության և այլ հրամանների նախագծերի նախապատրաստում և հաշվառում,

17) ԳՊՀ ընթացիկ և տարեկան հաշվետվությունների նախապատրաստում,

18) ՀՀ կրթության լիազոր մարմնի և իրավասու կազմակերպությունների համար ուսումնական գործընթացին վերաբերող տեղեկատվական-վիճակագրական տվյալների նախապատրաստում,

19) ուսանողների տվյալների բազայի ստեղծում և պահպանում,

20) դասալսումների կազմակերպում և անցկացում, արդյունքների վերլուծություն, բարելավման առաջարկությունների ներկայացում,

21) պրոֆեսորադասախոսական անձնակազմի վերապատրաստման ծրագրերի կազմակերպում, համակարգում,

22) ներքին և արտաքին շահակիցների համար լրացուցիչ կրթական ծրագրերի կազմակերպում, համակարգում,

23) ԳՊՀ-դպրոց կապերի ապահովում, աշակերտների մասնագիտական կողմնորոշման ծրագրերի կազմակերպում, համակարգում,

24) այլ գործառույթների իրականացում:

III. ԱՔԲ կառուցվածքը և կառավարումը.

6. ԱՔԲ-ն ենթարկվում է ԳՊՀ ռեկտորին և ուսումնագիտական աշխատանքների գծով պրոռեկտորին:

7. ԱՔԲ-ի հաստիքացուցակը հաստատում է ԳՊՀ հոգաբարձուների խորհուրդը:

8. ԱՔԲ-ն ղեկավարում է վարիչը, որին նշանակում և պաշտոնից ազատում է ռեկտորը: ԱՔԲ-ի վարիչի հետ ռեկտորը կնքում է աշխատանքային պայմանագիր: ԱՔԲ-ի վարիչը, ի պաշտոնե, ԳՊՀ գիտական խորհրդի և ռեկտորատի անդամ է:

9. ԱՔԲ-ի վարիչն իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) ԱՔԲ-ի աշխատակիցների անմիջական ղեկավարում,

2) գիտական խորհրդում և ռեկտորատում ուսումնական գործընթացին վերաբերող հարցերի նախապատրաստում և ներկայացում,

3) ուսումնական գործընթացին վերաբերող ԳՊՀ կանոնակարգերի և ԳՊՀ ուսումնական աշխատանքների հաշվարկի նորմերի մշակում,

4) ֆակուլտետների և ամբիոնների կողմից ուսումնական գործընթացների կազմակերպմանը վերաբերող ԳՊՀ հրամանների և այլ փաստաթղթերի կատարման վերահսկում,

5) այլ գործառույթների իրականացում:

10. ԱՔԲ-ի վարիչը պատասխանատվություն է կրում ԱՔԲ-ի աշխատանքների որակի, ԱՔԲ-ի խնդիրների լուծման և գործառույթների պատշաճ կատարման համար:

11. ԱՔԲ աշխատակիցները պատասխանատվություն են կրում իրենց գործառույթների պատշաճ կատարման համար: